ՀՀ կառավարության կայքը այժմ գտնվում է բարեփոխման գործընթացում, ինչի արդյունքում ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությանը ավելի լայն հնարավորություն ընձեռվեց
ՀՀ **ազգային փոքրամասնությունների** ոլորտին վերաբերող առաջնահերթ նշանակության տեղեկատվություն տրամադրելու և հանրության իրազեկման շրջանակներն ընդալայնելու համար:

Կաշխատենք կայքի սույն ենթաբաժնում տեղադրել ՀՀ մամուլի էջերից քաղված վարչության լիազորությունների շրջանակին առնչվող շաբաթվա կարևորագույն լուրերը:

Լուրեր

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Համաձայն “Ազգ” օրաթերթի 04.02.10թ. համարի տեղեկության, Հռոմի քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ պապը Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելյան Եվրոպայի կաթողիկե հայոց առաջնորդ է նշանակել Մխիթարյան ուխտի միաբան հոգեշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանին:
Առաջնորդ հոր նստավայր է ծառայելու ք. Գյումրին եւ Երեւանի Քանաքեռի Հայ կաթողիկե կենտրոնը: